

միշտ ազգն Հայոց, որ վայելեաց  
զանչափ նորա երախտիս եւ եկեղեցին  
մաղթեցէ զանսպառնի կեանս երկնից:

\* \* \*

Պէշեթաշի թաղը վաղուց ունեցած է իւր  
վարժարանը, որ փայտաշէն կայրի 1864ի  
ատենները, բայց 1866ին նորաշէն կը կառուցուի  
Պալեաններու եւ Տատեաններու առատաձեռ-  
նութեամբ եւ կը կոչուի Մաքրունեան, ի  
յիշատակ վաղաձեռնիկ ՏիկինՄաքրունեանի՝  
մէկ հատիկ աղջկը Առաքել պէյի Տատեան  
եւ կողակիցը ճարտարագետ Սարգիս պէյի  
Պալեան:

Մաքրունեան վարժարանը՝ կանգուն է  
եկեղեցիին ճիշդ դէմը, եւ Ազգին ընծայած է  
ուսեալ անհասներ. այս վարժարանի նախկին  
սանուհիներէն է, տաղանաւոր Գրագիտուհի  
Տիկին Ե. Աւետեսեան (Անայիս), գպրոցասիրաց  
վարժարանին ինամակալութեան արդի ջանադիր  
Ատենապետուհին. այս վարժարանին մէջ առած  
է իր նախնական կրթութիւնը Գևտ. Միհրան  
Քէհաճեան, այժմ ականաւոր բժիշկ Պարսի մէջ,  
ինչպէս նաեւ յայտնի գրագէտ Արշակ Չոպանեան:

Պէշեթաշի եկեղեցիին մէջ՝ պատարա-  
գած ու քարոզած է 1859 ապրիլ 26ին ամենայն  
Հայոց նորընտիր կաթողիկոս Մատթէոս Ա.  
եւ ապա հիւրասիրուած է Պալեան կարգապետ  
ամիրային տունը՝ զօրավար Լորիս Մելիքովի հետ,  
որ յատկապէս հրաւիրակ եկած էր Կ. Պոլիս,  
կաթողիկոսը էջմիածին առաջնորդելու<sup>2</sup>:

Երկար տարիներ Պէշեթաշի եկեղեցիին  
քարոզիչ եղած է Խորէն Նար-պէյ Սրբազան,  
որ վարժարանին բարեկարգութեանն ալ մեծա-  
պէս հսկող եղած է:

Պէշեթաշ եղած է բնակավայր երեւելի  
ամիրաներու, որոնց յետապրածներէն էր Յա-  
րութիւն բաշա Տատեան, պետական բարձրաստի-  
ճան պաշտօնեայն արքունի վառօդապետ՝ բարե-  
յիշատակ Յովհաննէս պէյ Տատեանի զաւակը,  
որ 1896—1900 մեծ դեր կատարեց իբր  
Ատենապետ ազգային վարչութեան քաղաքա-  
կան ժողովին: Մեռաւ 1901 հոկտ. 7ին եւ  
կայսերական հրամանաւ թաղուեցաւ Պէշեթ-  
թաշի եկեղեցիին հարաւային պարտեզը:

Պէշեթաշ չէ եղած երբեք ազգային

<sup>1</sup> Տէր Սահակ քահանայ Տ. Սարգսեան Պէշեթաշի  
մէջ բացած է անձնական վարժարան մը, զոր փոխարժեք  
է յետոյ Օրթապէլը:

<sup>2</sup> Պարսի. Հայոց, Ա. Պէրպէրեան, էջ 611:

կարեւոր շարժումներու կենդրոն, ինչպէս Խաս-  
գիւղ կամ Սամաթիա եւ Իւսկիւտար, բայց  
ունեցած է կարեւոր ընկերութիւններ դպրոցա-  
ւէր, աղքատախնամ կամ բարեգործա-  
կան. ասոնց մէջ նշանակելին է 1861ին հաս-  
տատուած Հայկազեանը, որ օգտակար գիրքեր  
հրատարակել տուած է ինչպէս, Բարոյականը  
Պլուտարքեայ, Առաջնորդ Հայ Ընթերցա-  
նութեան, Նախագիտելիք մանկանց, Իրա-  
ւագիտութիւն համառօտ եւ ուրիշներ՝ որոնց  
բոլորն ալ կը տպագրուէին Ղալաթիա, Միւհէն-  
տիսեան տպարանը:

Պէշեթաշի թաղն ալ այժմ կապտուած  
է իր երբեմնի վառ փայլունութիւնէն. Հայ  
բնակչութիւնը մեծապէս նուազած է հոն, բայց  
եկեղեցին ու վարժարանը կը մնան կանգուն,  
փոքրաքանակ ժողովուրդով եւ սակաւաթի-  
ւաշակերտներով:

Եկեղեցիին դուրսը հարաւային որմն վրայ կը կար-  
գացուի 7 տող երկաթագիր փորագրուած Արձանագրութիւն  
մը, որ կը յայտնէ թէ հոն կը դրանուի հրդեհի համար ընդար-  
ձակ ջրամբար մը. ահաւասիկ այն.

Երեսնաւ ջրշող Ս. Եկեղեցւոյն  
ծակիւք հանգուցեալ Ազնուուհի  
Պիստոս տիկնոջ, զստեր Գալուստ  
Աղայի Բէմխամեան եւ կողակցին  
ի յիշատակ անմահ հոգւոյն:  
1865 մայիս 10:

(Շարտանակելի): ԴԿՏ. ՎԱՅՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



### ՅԵՐԳՈՆԻ ՀՈՅ ՆԱՀԱՏԱԿԻՆ

(Շարտանակելի):

Գ.

Գեր. Ս. Վ. Տէր Աբրահամեան Սրբազան  
Պիոս ԺԱ.ին ուղղած իւր Ուղերձն աւար-  
տում էր այսպիսի ջերմ խօսքերով.

«Երիցս երանեալ Հայր, այժմ ես պիտի  
կատարեմ մի ուրիշ պարտականութիւն.  
Հնորձակալութիւն պիտի յայտնեմ Ձեր  
Սրբութեան, որ վճռեցիք Հայաստանի նա-  
հատակի, երանելի Կոմիտաս Քէօմիւրճեանի  
սրբացումը: Այս եղելութիւնը ուրախու-  
թեամբ պիտի լցնէ Արեւելեան Եկեղեցու  
քրիստոնեաների եւ մասնաւորապէս նրա ազ-  
գակից հայերի սիրտը, որոնք քանի քանի  
անգամ անազորօյն հարստահարութիւններ  
կատաղութեան առարկայ են եղած, բայց

դարձեալ ամուր պահպանում են իրենց  
հայրերի հաւատքը: Այս սրբացումը միւ-  
թարութիւն պիտի պատճառէ ամէն կողմ  
ցրուած Ձեր հայ որդիներին եւ այս նահա-  
տակը օրինակ պիտի հանդիսանայ բոլոր իր  
հայրենակիցներին»:

«Աղերսում եմ, Երանեալ Հայր, Ձեր  
Սրբութեան օրհնութիւնը, ամբողջ հայ ժո-  
ղովրդեան, հայ նահատակի երանացման  
դործում աշխատողներին, Պատրիարքի եւ իր  
ամբողջ նուիրապետութեան վրայ»:

Ուղերձին պատասխանեց իր Գահից  
Պիոս ԺԱ. նա խօսեցաւ մօտ մի քառորդ  
ժամ: Իր ճառի մեծագոյն մասը Եկեղեցու  
կրաւունքներին եւ քրիստոնէական կեանքի  
առաքինութեան վրայ էր եւ վերջացրեց,  
իր օրհնութիւնն ուղղելով «սիրելի Հայաս-  
տանին եւ հայ ժողովրդին», որոնց համար,  
ասաց, փառք եւ պատիւ է իրենց մի զա-  
ւակի այսօր երանացումը, դովեց հայ ժո-  
ղովրդի հաւատարմութիւնը իր նախահայ-  
րերի հաւատքին եւ մաղթեց, որ լաւագոյն  
օրեր ծագին շուտով նրա համար»:

Այժմ մնում էր բուն եւ դիւխաւոր հան-  
դէսը Ս. Պետրոս Մայր Եկեղեցում:

Հասել էր այն օրն, երբ աշխարհիս ա-  
մենամեծ եւ ամենաչքեղ տաճարում, Քրիս-  
տոնէութեան ամենահեղինակաւոր Գլուխը,  
տանեակ հազարաւոր հաւատացեալներ  
ազգութեան ներկայութեամբ պիտի խըն-  
կարկէր Պոլսեցի հայ Քահանայի պատկերի  
առջեւ եւ այս կերպով պիտի նուիրադրու-  
ծէր նրա երանացումը: Մի օր յառաջ Վա-  
տիկանի մեծ ամենօրեան՝ Osservatore Ro-  
mano պաշտօնաթերթը 6 ամբողջ սիւնակ  
էր նուիրել «Հայ աւագերէց եւ մարտիրոս  
էր նուիրել Կոմիտաս Քէօմիւրճեանին»: Յօ-  
երանելի Կոմիտաս Քէօմիւրճեանին»:

«Սուրբերի  
դուածն սկսում էր այսպէս. «Սուրբերի  
պատմութիւնը Եկեղեցու եւ քաղաքակրթեալ  
մարդկութեան պատմութիւնն է...: Այժմ  
կարգը Հայաստանինն է, այն բիրդիական  
երկրի, որ «սուրբերի եւ մարտիրոսների  
ծնող է» եւ որի կրօնական եռանդը հայրե-  
նասիրական եռանդի հետ մի ամբողջու-  
թիւն է կազմում...: Քէօմիւրճեան Կոմի-  
տաս հայ քահանան ու նահատակը, ողբեր-  
գական Հայաստանի ցաւալի եւ միանգա-  
մայն լուսաւոր պատկերն է հանդիսանում»:  
Մայն լուսաւոր պատկերն է հանդիսանում  
Այսպիսի Յառաջաբանից յետոյ Հոռոմէական  
Եկեղեցու պաշտօնաթերթը պատմում էր

Տէր Կոմիտասի վարքը, նահատակութիւնն  
եւ երանացման դործի ընթացքը եւ վերջաց-  
նում էր Պիոս ԺԱ.ի Հայաստանի եւ հայ  
ժողովրդի հասցէին ուղղած սրտագին հա-  
մակրական խօսքերով, որոնք յառաջ եմ բե-  
րած արդէն:

Յունիս 23ին, Կիրակի օրը, Ս. Պետրոս  
Հայրապետական Մայր Եկեղեցին ամբողջա-  
պէս ողողում էր լոյսերի մէջ: Տաճարի  
փառազարդ ճակատի վրայ կախուած էր Տէր  
Կոմիտասի պատկերը, հայկական եկեղեցա-  
կան զգեստով, ձեռքումը մարտիրոսական  
դափնին եւ երկու կողմը երկու հրեշտակ,  
երկնային ամպերի մէջ. հեռուից երեւում  
էր Կ. Պոլիս քաղաքը, Ս. Սովիա մզկի-  
թովը: Եկեղեցու ներքին այն մասում, որ  
La Gloria է կոչւում, նոյնպէս դրուած էր  
նրա պատկերն, դարձեալ հայկական զգես-  
տով, մարտիրոսական դափնիով եւ երա-  
նելեաց աշխարհի մէջ: Այս երկու պատ-  
կերն էլ հսկայ մեծութիւն ունէին, որպէս  
զի ժողովուրդը հեռուից կարենար պարզ  
աչքով տեսնել: Երկու ուրիշ տեղ էլ, Ս. Հե-  
ղինէի եւ Ս. Վերոնիկայի պատշգամբներից,  
կախուած էին երկու խոշոր դրօշակներ,  
որոնց մէկի վրայ նկարուած էր Տէր Կո-  
միտասը ծնկաչոք. թուրք դահիճը սուրը  
ձեռքում պատրաստուած էր նրան զլխատել:

Իսկ քովը կանգնած էր թուրք դատաւորն  
իր զինուորներով: Իսկ միւս դրօշակը ներ-  
կայացնում էր թրքական դատաստանը, դա-  
տապարտեալ հայ քահանան կանգնած է  
դաժանադէմ մեծ վէղիրի առջեւ, շրջապա-  
տուած թուրք մուլաներով եւ զինուորնե-  
րով: Ս. Պետրոսի եկեղեցին առաջին ան-  
գամ էր այսպիսի պատկերներ տեսնում...:  
Պետրոս Առաքելի հանրածանօթ բրոնզեայ  
արձանը դարդարուած էր քահանայապետա-  
կան զգեստով, որ միայն արտակարգ հան-  
դիսաւոր օրերումն է լինում:

Կարգը թէ՛ դուրսը եւ թէ՛ ներսը պահ-  
պանում էին Վատիկանի սեփական պահակ-  
ներն իրենց յատուկ զինուորական համա-  
զգեստով:

Հանդէսը սկսաւ առաւօտեան ժամի  
10ին, Ս. Պետրոսի Աւագերէցը կարդինալ  
Մէրրի դէլ Վալ իր ամբողջ եկեղեցական  
խումբովը մտաւ ներս: Նրան հետեւեցան  
«Մէսերի ժողովը» անդամ կարդինալներն  
եւ այլ եկեղեցականները, բազմաթիւ արքե-  
պիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ եւ տեղա-

տրուեցան Դասուժ, այն է Աւագ խորանի ընդարձակ կիսաբոլորակում: Նրանց կողքին, պատուաւոր տեղ էր յատկացուած հայ եկեղեցականութեան, որ ամբողջապէս ներկայ էր, Թէրզեան պատրիարքի գլխաւորութեամբ, եւ հայ աշխարհականներին, թէ Հոռոմում ընկուողներին, իբրեւ կղերանոցի աշակերտներ, կամ համալսարանական ուսանողներ եւ թէ յատկապէս Հոռոմ եկած ուխտաւորներին:

Երբ բոլոր հանդիսականները դրուեցին իրենց պատշաճաւոր տեղերը, ոտք ելաւ Տ. Սարգիս Ծ. Վ. Տէր Աբրահամեան, երանացման գործի «խնդրամատոյցը» (postulatore) եւ «Ծէխերի ժողովի» նախագահ կարգինալ Լաւրէնտիին յանձնեց երանացման վերաբերեալ առաքելական թուղթը (Breve apostolico) եւ խնդրեց, որ իրաւունք տայ կարգալու ի դիտութիւն ընդհանուրի: Կարգինալը իր հաւանութիւնը տարով, ըստ օրինի, յանձնարարեց որ երթայ այս մասին պատշաճաւոր արտօնութիւն ստանայ Մէրքի դէլ Վալից, որի իրաւասութեան տակ է գտնուում Տաճարը: Երբ այս ձեւակերպութիւնն եւս կատարուեց Monsignor Barnabani բարձրաձայն կարգաց թուղթն, որով Պիոս ԺԱ. պապը Պոլսեցի հայ քահանայ Կոմիտաս Գէօմիւրճեանի գովասանքն էր անում, իբրեւ քրիստոնէական հաւատքի համար գոհուող նահապետ, եւ յայտարարում էր հանդիսաւորապէս թէ նա դասուած է Հոռոմէական եկեղեցու երանելեաց կարգը:

Այս ընթերցումից անմիջապէս յետոյ վեր են կենում բոլոր ներկաները. բաց են անում Տէր Կոմիտասի մեծազէր պատկերը եւ եկեղեցու անհամար զանգակներն ամէն կողմից սկսում են ուրախ ուրախ զօղանջել: Վատիկանի կանոնիկոս արքեպ. Luigi սկսում է երգել «Զքեզ Աստուած Գովաբանեմքը» (Te Deum), որին անմիջապէս արձագանգ է տալիս դասում գտնուող հայ երգչական խումբն եւ ապա ամբողջ հազարաւոր ժողովուրդը: Այնուհետեւ նոյն արքեպիսկոպոսը բուրվառը ձեռքին ծունկ է չոքում եւ սկսում է խնկարկել նոր Երանելու պատկերի առջեւ: Այդ միջոցին բոլորը միասին արտասանում են հետեւեալ ազօթքն, որ յատկապէս յօրինուած էր այս առթիւ. «Դու ո՛վ Քրիստոս, Հիմն Կենաց, Աղբիւր Գթութեան, առատ շնորհ պարգեւեցիր յաղթական մարտիրոս Երանելի Կոմիտասին,

խաւարը փարատելու եւ մեր հոգիները լուսաւորելու համար:

Ով Երանելի եւ փառաւորեալ Մարտիրոս, որ բազում չարչարանքից յետոյ գտնուում ես կեանքի լոյսի մէջ, բարեխօսիր մեզ համար Քրիստոսի մօտ<sup>14</sup>»:

Այնուհետեւ կայացաւ «քահանայապետական» կոչուած հանդիսաւոր լատինական պատարագը բազմաթիւ հոգեւորականներ ընթերակայութեամբ: Պատարագի միջոցին ներկաներին բաժանում էին Տէր Կոմիտասի համառօտ կենսագրութիւնն իտալերէն լեզուով եւ նրա երկու փոքրազիր պատկերը, մէկը ծնկաչօք, գլխատման վայրում, միւսը հայկական պատարագի զգեստով: Երկու պատկերի ետեւն էլ տպուած էր վերեւ յառաջ բերուած յատուկ Ազօթքն իտալերէն լեզուով: Պատարագի ժամանակ երգում էր Ս. Պետրոսի հռչակաւոր երգչական խումբը (la capella Giulia):

Կէսօրը նոր էր անցել երբ վերջացաւ Հանդէսի այս առաջին մասը:

Երկրորդ մասն, նոյն ինքն Պապի մասնակցութեամբ տեղի ունեցաւ երեկոյեան: Առաւօտեան եկեղեցու մուտքն ազատ էր, իսկ երեկոյեան՝ տոմսակներով:

Երեկոյեան հանդէսի ծրագիրն այն էր, ինչ որ բոլոր նախորդ երանացումների ժամանակ: Այս անգամ բազմութիւնը աւելի էր, որ եկել էր գլխաւորաբար Պապին տեսնելու. կարգապահութեան մասնակցում էին բացի պապական զինապահներից նաեւ իտալական զինուորներ:

Երեկոյեան ժամի 6 էր երբ Պիոս ԺԱ. իր սպիտակ հագուստի վրայ քահանայապետական կարմիր պատմուճանը դրած, իր շքախմբով իջաւ Հաղորդութեան Մատուռը, ուր նրան ընդունեց Աւագերէց կարգինալ Մէրքի դէլ Վալ: Այդ տեղից նրանք անցան միւս՝ Գթութեան Մատուռը, ուր խմբուած սպասում էին կարգինալները համակ ծիրանաւորուած: Այնտեղ պապը նստաւ իր հանդիսական դահաւորակը (sedia gestatoria), ինչպէս պահանջում էր Աբարդղական Կարգը, եւ կարգինալները ու այլ եկեղեցական հետեւորդների հետ յառաջացաւ

<sup>14</sup> Իտալերէն ընդհրդ. Tu, o Cristo, Fonte di vita, Sorgente di misericordia, hai largito al Beato Gomidis, martirio vittorioso, per dissipare le tenebre ed illuminare le nostre menti.  
O Beato e glorificato Martire, che, dopo aver tollerato molti tormenti, sei ora rivestito della luce di vita, intercedi per noi presso Cristo. Amen.

Ս. Պետրոսի կենդրոնը, խոնարհեցաւ Պետրոս Առաքելալի արձանի առջեւ եւ ապա եկաւ քահանայապետական սեղանը: Պիոս եկաւ քահանայապետական սեղանը: Պիոս ԺԱ. այդտեղ իջաւ իր դահաւորակից, ծունկ չոքեց Սրբութիւն Սրբոցի առջեւ եւ սկսեց խնկարկել, նախ Սրբութիւն Սրբոցն եւ ապա նոր Երանելու, հայ Գահանայի պատկերը: Տաճարի մեծ նուագարանն սկսեց հնչեցնել, երգչական խմբի ընկերակցութեամբ Տէր Կոմիտասի Ազօթքը: Այդ միջոցին Թէրզեան պատրիարք կանգնած էր անմիջապէս Ս. Պապին մօտ: Գեր. Տէր Աբրահամեան մօտեցաւ Պիոս ԺԱ.ին եւ պատշաճաւոր խոնարհութեամբ մատոյց արհեստական ծաղիկներից շինուած աւանդական «Ծաղիկփունջը», երանելի Տէր Կոմիտասի փոքրազիր պատկերներ եւ իտալերէն կենսագրութեան շքեղակազմ: Ս. Պապը ժպտալից շնորհակալ եղաւ հայ-կաթոլիկ նուիրապետութեան կողմից մատուցուած այս ընծաների համար եւ իր Առաքելական օրհնութիւնը շնորհեց:

Երանելի Կոմիտասի պատկերները, եւ կենսագրութիւնը բաժանեցին այդտեղ նոյնպէս բոլոր կարգինալներին, արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, եւ առհասարակ բոլոր հրաւիրեալներին:

Այսպիսի պարագաներում սովորաբար կատարում է նաեւ նոր Երանելու մատուցելի ներկայացումը, բայց այդ տեղի չունեցաւ, որովհետեւ Կոմիտասի մարմին ո՛ւր գտնուելու հարցը վերջնականապէս լուծուած չէ համարուած:

Հանդէսը վերջացած էր: Պապը դարձեալ նստաւ իր դահաւորակը եւ նոյն շքախմբի հետ հանդարտօրէն հեռացաւ եկեղեցուց եւ մտաւ Վատիկան:

Հրաւիրեալների թում կային զեսպանական մարմնի անդամներ, Հոռոմէական ազնականութեան ներկայացուցիչներ, եւ բազմաթիւ զանազան կարգերի ասպետներ, ուխտաւորներ եւ այցելուներ ամէն երկրից եւ ազգերից:

Հետեւեալ օրը, Յունիս 24ին Հոռոմէական եկեղեցում թէրզեան կաթոլիկոս հանդիսաւոր պատարագ մատոյց նոր երանելու պատուին նուիրուած. Աւետարանի ընթերցումից յետոյ Հոգեւոր Տէրը քարոզութեամբ, որի մէջ շեշտելով այս հանդէսի ներքին նշանակութիւնը, հայ-կաթոլիկ նուիրապետութեան եւ ժողովրդեան խորին

շնորհակալութիւնը յայտնեց Պիոս ԺԱ. քահանայապետին եւ այն բոլոր կարգինալներին, որոնք աշխատել էին այս գործում: Նա առանձնապէս կանգ առաւ այն մեծ եւ ազդու պաշտպանութեան վրայ, որ ներկայ պապը քանիցս ցոյց է տուած կարօտալից հայ ժողովրդին թէ՛ բարոյապէս եւ թէ՛ դրամական միջոցներով: Իր քարոզի վերջում կաթոլիկօսը մաղթեց, որ նոր Երանելու երկնային միջնորդութեամբ՝ բովանդակ հայ ժողովուրդը, իր կրած ահաբեկ զրկանքներից եւ տուած անհամար զոհերից յետոյ, վերջապէս իր խաղաղութիւնը գտնէ եւ վայելէ ազատ եւ անկախ ազգի բոլոր բարիքները:

Պատարագին երգում էր Հոռոմի հայ դպրոցի երգեցիկ խումբը՝ ուսուցիչ Տէր Մկրտիչ Վ. Աբգարեանի ղեկավարութեամբ:

Եկեղեցին լիքն էր օտարականների մեծ բազմութեամբ, որոնք եկել էին յատկապէս հայերէն պատարագ եւ հայ եկեղեցական արարողութիւն տեսնելու եւ շատ զոհ էին մնացել:

Այս բոլոր հանդիսութիւնները պատկուեցան այն մասնաւոր ընդունելութիւններով որ Պիոս ԺԱ. շնորհեց Հայոց, Նորին Սրբութիւնը բարեհաճեց ընդունել իր առանձնական դահլիճում, այն հայ որբերին, ուսուցիչներին 1915ի կոտորածներից մնացած որոնք ընդունուած են Իտալիայի Տօրինօ (Torino, Turin) քաղաքի որբանոցում: Այս որբանոցը պահպանուած է պապի շնորհած միջոցներով եւ կրում է «Պիոս ԺԱ.ի Որբանոց» կոչումը: Նրանցից 50 որբ եկել էին յատկապէս թէ՛ Տէր Կոմիտասի երանացման հանդէսին ներկայ գտնուելու եւ թէ՛ իրենց Բարերար Քահայ պատուելու եւ թէ՛ իրենց Բարերար Քահանայապետի 50ամեայ քահանայութեան Յորհաւորելով իրենց երախտագիտութեան զգացմունքը յայտնելու: Այս ուղեւորութիւնը յաջողեցնելու համար Տօրինօյում, տեղացի երկսեռ քաղաքացիներից մի Յանձնաժողով էր կազմուել, որ հոգացել էր ամբողջ ծախքը: Պապին ներկայացան՝ որբերի հետ միասին այդ Յանձնաժողովի նախագահը իտալացի comm. Cesare Trucchi եւ որդին, Որբանոցի տեսուչ Հ. Յ. Կիրակոսեան, բժիշկը Դոկտ. Չրաքեան, հայ մեծաւորուհին՝ Բրարիոն մայրապետ եւ 7 «քոյրեր», ինչպէս եւ Որբանոցի իտալացի բարեկամներից երկու հոգեւորական:

